

# Ս Ի Ո Ն

ԺԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1941

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 10

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ

(ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ)

Գ.

Առաջին երկու Խմբագրականներով ուրուագծեցինք Դուրեան և Գուշակեան պատրիարքներու շրջանը, ուր Հայ Երուսաղէմի տասնհինգ տարիներէ ի վեր սկսուած և յառաջ տարուած կրօնական, կրթական և տնտեսական զործին իրազօրծումները կը մէկտեղուէին: Ներկայ Խմբագրականը ստիպուած է բաւարարուիլ կարճ շրջանով մը որ ի լինելութեան է տակաւին: Հակառակ դժնդակ հանգամանքներուն, և անոնց զուգահեռ աննախընթաց աղէտին, որոնք այս շրջանը կը լեցնեն, ուրախ ենք յայտարարել կարենալու որ չկասեցաւ ընթացքը հոգևոր և իմացական այն վերածնութեան, զոր Հայ Երուսաղէմի նոր պատմութիւնը մեծ պատերազմէն վերջ արձանագրեց իր էջերում: Եւ այս՝ չնորհիւ նախ Ասատուծոյ, ապա՝ Նորին Ամեն. Տ. Տ. Մեսրոպ Ա. Պատրիարք Նշանեանի, և անձնուէր ու զիտակից Միաբանութեան:

Նորին Ամեն. ինչպէս ըսած ենք այլուր, զինք կանխող երկու պատրիարքներու շրջանին եղած է անխոնջ ու կարևոր գործակիցն ու խորհրդականը անոնց, իբրև հմուտ վանական աւանդութեանց և անցեալ իրադարձութեանց: Համեստ չէ Նորին Ամեն. բաժինը երկուքին օրով սկզբնաւորուած ու բարգաւաճած կրթական արդիւնքին մէջ որով այնքան բախտորոշ կերպով կը դիմադծուի Հայ Երուսաղէմի վերջին տասնհինգամեակը: Երկուքին գործակից, անիկա թէ՛ իբր տեսուչ կրթական այս հաստատութեան, և թէ՛ նոր սերունդ մը հասցընելու և ժամանակի բազմերես պահանջներուն զոհացում տալու աշխատանքին նախանձախնդիր, եղած է այս գեղեցիկ շարժման և արդիւնքին խարխիւ ծառայող լաւազոյն ոյժը:

Այսօր Նորին Ամեն. յաջորդն է անոնց, և իր մաքուր ձեռքն է որ կը հանգչի այս սուրբ անդաստանի մաճին վրայ. հակառակ ինչպէս ըսինք պատերազմի ստեղծած դժնդակ պայմաններուն, սկզբնաւորուած ու բարգաւաճած

կրօնական, կրթական, տնտեսական և ժողովրդային ծառայութեան համար թափուած ջանքերը կը շարունակուին: Իր գերին մէջն է դպրոցը, կը դործէ մամուլը, և հակառակ տնտեսական դեռնին վրայ զոյաւորուած դառն պայմաններուն, ամէն ճիգ ի դործ կը դրուի պահելու համար զէթ իրաց վիճակը:

Սակայն իրաւամբ մտածուի թերեւ. — տարիները որոնց առջին ենք, կը բազմապատկեն պէտքերն ու պահանջները այս մեծ հաստատութեան, նկատի ունենալով առաւելապէս անոր հոգեկան և իմացական երեսները, որոնք պէտք չէ տփգունին և տկարանան բազմապահանջ ժամանակէն: — Բարեացակամութիւններ և նախանձախնդրութիւններ բաւական չեն ընելու ա՛յն ինչ որ անհրաժեշտ է, ինչ որ արտաքին ազդակներէ աւելի ներքին շարժօններու և ոգիի կը կարօտի, այն ոգիին՝ որ կը ջանայ և կը նիւթէ, և առանց որուն ինչեր ալ որ փորձուին պիտի մնան ժամանակը լեցնող անանդրադարձ և անբաւարար եղբւրթիւններ միայն:

Ստոյգ է որ անձկութեան օրերու և տազնապի շրջան մըն է որ կը բուրէ ամբողջ մարդկութիւնը. բայց ժամանակը որ կ'անցնի պէտք է լեցուի, վասնզի ամէն վայրկեան իր դերը ունի, և կը պահանջէ զայն մեզմէ:

Այդ խոր գիտակցութեամբ տողորուած է՝ և պարտի տողորուիլ մէն մի անգամը Ս. Յակոբեանց Միաբանութեան, սկսեալ Ամեն. Գահակալէն: Որքան ալ հարուստ ու խոստմնալից ըլլայ անցեալի ժառանգութիւնը, անհրաժեշտ է ներկային տուրքը: Ճիշդ է թէ Ս. Աթոռոյ վարչական, տնտեսական և կրթական մարդերուն վրայ իրազործուած բարիքները շահուած յաղթանակներու չափ ծանր կը կշռեն, սակայն անոնց մշտնջենաւորումը, այս ապերախտ օրերուն մանաւանդ, աւելի քան ստիպողութիւն կը ստանայ:

Այդ մշտնջենաւորումը եթէ անկարելի է նոր նուաճումներու թափով, կարելի պարտի ըլլալ իր ներքին, հոգեկան ու բարոյական երեսներու վերանորոգմամբ: Եղածը պահել, անոր նկատմամբ սէր և զուրգուրանք տածել, նուազ առաքինութիւններ չեն, և զարգացման ու յառաջդիմութեան ճամբուն վրայ իրենց կարևոր նպաստը կը բերեն: Տեղաշարժեր կան որոնք յառաջանալու համազօր են, կը բուէ որ այդ սպասումները ապագայի յոյսերով ու հաւատքով պաշտպանուին:

Գիտենք թէ բարի կամեցողութիւնը, անխոնջ եռանդը շատ անգամ կը դիմաւորեն ժամանակի աննպաստ բոլոր բերումները: Գիտենք թէ ոգիի աւելի մեծ զեղում մը, աշխատանքի բուռն տենդ մը պիտի կրնային պակասած ուրիշ պատեհութիւններ և յարմարութիւններ հակակշռել:

Այսուհանդերձ նորին Ամենապատուութիւնը իր զահակալութեան առաջին օրէն իսկ հաստատութեան կրթական ու տնտեսական դործին մղում տալու համար ի մտի ունեցաւ կարգ մը իրազործումներ, որոնք դժբախտ իրադարձութեանց բերումով ցարդ ծրագիր կը մնան:

Այդ փափաքներուն և ծրագիրներուն շարքին մենք արտօնուած ենք հոս խօսելու կարևորագոյն եղբւրթեան մը վրայ, որուն համեմատ Ս. Աթոռը իմացական հզօր կեդրոնի իր հմայքին մէջ բարձրացնելու համար կարիք կայ մեր մտքին ժամանակակից բարձրագոյն անձնաւորութեանց ուժերուն արդիւնաւէտ դործածութեան: Մինչ մէկ կողմէն մեր դարաւոր ոճին մէջ կը վերակառուցուի

Ս. Լուսաւորիչ եկեղեցին, միւս կողմէն զայն զարդարելու կանչուած նկարներուն համար վանքը չէ վարանած ճշմարիտ արուեստագէտներու դիմել, մեր արուեստին իրական ձայնը, խորհուրդը ստեղծել սրբատաշ այդ տաճարի ներքին հանդերձանքին համար։ Հայ մտքի ամէն արժանաւոր աշխատաւորին Հայ երուսաղէմը ծրադրած է բանալ իր ասպնջականութիւնը, իր կարելի սպասը, որպէսզի տիրաբար մշակուին հոս հայ պատմութիւնը, հայ բանասիրութիւնը, հայ զրականութիւնը, հայ իմաստութիւնը, կարճ՝ հայ արուեստը իր բոլոր կերպարանքներով, վաւերական տաղանդներու փաղանգի մը կողմէ։ Որպէսզի իրականանայ Հայ երուսաղէմի յղացքը իր բոլոր կողմերուն մէջ, նորին Ամենապատուութիւնը նկատի ունի առ այդ ձեռնհաս, փորձ եւ տիրական անձնաւորութիւններ։

Բայց ամենէն աւելի իր սրտին խօսող աշխատանքը Չեռազրաց Մատենադարանի արդիացումն էր, հոն պահուած զանձերու հանրութեան սեփականութեան վերածումը, իրականաբար ուսումնասիրութեանց մէջ մեր ձեռագիրներու օգտագործումը, և Կիւլպէնկեան Մատենադարանի կողքին լուրջ և ստեղծագործ աշխատանքի կեդրոն մը ընծայելու սրբազան փառասիրութիւնը։

Կրնանք այս փափաքներուն վրայ աւելցնել նաև նոյնքան սրտառուչ ու կարևոր ուրիշ երազ մը՝ արդիացումը, ընդարձակումն ու կատարելագործումը Ս. Յակոբեանց տպարանին, թէ՛ արհեստագիտական և թէ՛ հոգեկան մարզերուն վրայ։ Օժտել տպարանը տույաշար մեքենաներով, բանալ այդ մեքենաները տպագրական բազմազան եւ ընդարձակ աշխատանքներու, մեր ժողովուրդին զիրքի ծարաւը դիմաւորել հանրամատոյց և դիւրագին հրատարակութիւններով, սատար կանգնիլ հայ աշխատաւորին՝ անոր ստեղծագործութիւնները լոյս ընծայելու այնքան դժուարին մղձաւանջին մէջ։ Այսպէս ըմբռնուած տպարան մը անհրաժեշտ լրացուցիչը կը դառնար քիչ վերը համառօտակի վերլուծուած ծրագիրներուն։

Ու վերջացնելու համար քաղցրիկ այս երազին էջերը, աւելորդ չէ խօսիլ նաև վանքապատկան հոլերու վրայ նոր կալուածներու կառուցման, Պաղեստինի մէջ դպրոցներու օրինակելի ցանցի մը հաստատման, և այս կարգի ուրիշ հանրային բարիքին նպաստող հեռահայեաց ձեռնարկներու վրայ։

Տայր Աստուած սր շուտով վերջ գտնէին ժամանակին չարիքները, և նորին Ամենապատուութեան այդ բարի փափաքները զանէին իրենց իրադրոժումը, ի նպաստ դարաւոր այս հաստատութեան։

ԽՄԲ.

